

ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՁԵՆՂԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՈՒՄ*

Աննա Կնյազյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածում առանձնահատուկ շեշտվում է աշխարհի լեզվական պատկերի արժևորման խնդիրը: Առանձնակի ուշադրություն է դարձվում երգիծական խոսույթի (տվյալ դեպքում անեկդոտի) սոցիալական բնույթին և դրա մշակութային արժեհամակարգին: Անեկդոտն ազգային մշակույթի ինքնատիպ, չափազանց զարգացած և արգասավոր երևույթ է, որն ունի որոշակի տիպաբանական գծեր՝ ձևակաղապարներ, բովանդակություն և հաղորդակցային նշանակություն: Անեկդոտը նպաստում է գենդերային կարծրատիպերի ստեղծմանն ու ընկալմանը, խորացնելուն և ընկալելուն: Կանանց և տղամարդկանց բնորոշ գենդերային դերերը տարբերվում են բոլոր մշակույթներում: Գենդերային տարբերություններին վերաբերող որոշ կարծրատիպային պատկերացումներ համընդհանուր են բոլոր մշակույթների համար. դրանցից են ագրեսիվության, ուժի վերաբերյալ պատկերացումները որպես տղամարդկանց տարբերակիչ առանձնահատկություն, ինչպես նաև թուլությունը, հնազանդությունը և զգացմունքայնությունը որպես կանանց բնորոշ հատկություններ:

Քանալի բառեր. տղամարդակենտրոնություն, աշխարհի լեզվական պատկեր, գենդերային կարծրատիպեր, կենցաղային անեկդոտ, իգականություն, արականություն:

Ներածություն

Աշխարհի լեզվական պատկերի ուսումնասիրությունը կապված է տարատեսակ կարծրատիպերի, ենթադրույթների, եզրահանգումային գիտելիքների ու իմաստների բացահայտման հետ: Կարծրատիպը հիմնվում է անհատի գլխում ձևավորված աշխարհի պատկերի վրա, ըստ էության, այդ պատկերի անբաժանելի մասն է և ներառում է նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականներ: *Կարծրատիպ* եզրույթը վերաբերում է լեզվի և մշակույթի բովանդակային կողմին, այսինքն՝ երևույթ է, որը կապվում է աշխարհի *պարզունակ* պատկերի հետ:

Աշխարհի լեզվական պատկերի ձևավորմանը մասնակցում են օբյեկտիվ աշխարհը, մտավոր աշխարհը և լեզվական աշխարհը (Колшанский 1990), որոնց միջև կապող օղակ է լեզվական անհատը (Караулов 1987): Աշխարհի լեզվական պատկերը, բացի իր լեզվական յուրատեսակությունից, պարունակում է զանազան կարծրատիպեր (այդ թվում գենդերային), որոնք կարևոր դեր են խաղում մարդկային էությունը հասկանալու գործում: Լեզվում գենդերային կարծրատիպերի հետազոտությանն են նվիրված լեզվաբանների բազմաթիվ աշխատանքներ (Телия 1999; Gal 1995; Cameron 2000; Городникова 2002; Кирилина 2002; Гуссейнова 2002; Eckert, S. McConnel-Ginet 2003 և այլք):

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.02.2017:

Կարծրատիպերը ոչ միայն հեշտացնում են հաղորդակցումը՝ մատուցելով մտածողության ստանդարտ նմուշ-օրինակ, այլև հաջող հաղորդակցությանը խոչընդոտող գործոն են, քանի որ հաճախ դրանք հանգեցնում են էթնիկական խմբի վարքագծի ոչ ճիշտ մեկնաբանմանը: Պենդերային կարծրատիպեր վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել կարծրատիպականացման ինչպես բացասական, այնպես էլ դրական հետևանքները: Տեղեկատվության սղության պայմաններում այլ մարդու մասին կարծրատիպից բխող դատողությունները հաճախ գործում են որպես կանխատրամադրվածություն: Տվյալ դեպքում կարծրատիպը հաճախ կեղծ է և պահպանողական դեր է կատարում՝ մարդկանց մեջ սխալ պատկերացումներ ձևավորելով տեղի ունեցածի մասին, խեղաթյուրելով կատարվածի մեկնաբանության գործընթացը և միջանձնային համագործակցության բնույթը: Ցանկացած գենդերային կարծրատիպ, որը ճիշտ է մի իրավիճակում, կարող է սխալ լինել մեկ այլ դեպքում. և չլինել արդյունավետ շրջապատող հանրույթի նկատմամբ անձի կողմնորոշման հարցի լուծման համար: Մյուս կողմից՝ կարծրատիպերի առկայությունը էական դեր է խաղում սոցիալական կյանքում: Նախ՝ կարծրատիպը թույլ է տալիս կտրուկ նվազեցնել փոփոխվող իրականությանն արծագանքելու ժամանակը, երկրորդ՝ արագացնել ճանաչողության գործընթացը, երրորդ՝ ներկայացնել ինչ-որ նախնական հիմք՝ տեղի ունեցածի նկատմամբ կողմնորոշվելու համար:

Աշխարհի լեզվական պատկերի հետազոտությունը նպաստում է լեզվի և մշակույթի, լեզվի և մտածողության, լեզվի և կարծրատիպերի հիմնախնդիրների լուծմանը:

Անգլիական անեկդոտների գենդերային կարծրատիպերի հանրամշակութային բնութագիրը

Գենդերային կարծրատիպերը առավել հաճախ հանդիպում են այսպես կոչված կենցաղային անեկդոտներում: Անեկդոտը կարող է համարվել մշակութային նույնականացման միջոց, քանի որ այստեղ գործող անձի նկատմամբ սովորական ծաղրը, ընդունված չափանիշները կատակով գլխիվայր շուռ տալը և ստանդարտ տրամաբանությունը ծաղրելը կարող են իսկույն մատնանշել, թե խոսքը որ մշակույթի մասին է:

Ժամանակակից հասարակությունը բավականին դանդաղ է փոփոխում գոյություն ունեցող կարծրատիպերը, դիրքորոշումները իր տարբեր կառուցվածքների, այդ թվում և այնպիսի սոցիալական խմբերի վերաբերյալ, ինչպիսիք են կանայք և տղամարդիկ:

Անգլիական կենցաղային անեկդոտների բովանդակային վերլուծության հիման վրա վեր են հանվել այն ոլորտները, որոնցում արտացոլված են կանանց և տղամարդկանց բնութագրական գծերի կամ գործողությունների առավել տարածված կարծրատիպային պատկերացումները, մասնավորապես **ընտանեկան հարաբերությունների (ամուսնական անհավատարմության), հիմարության, արտաքին տեսքի, շատախոսության, հարբեցողության, փեսա-զոքանչ հարաբերությունների** ոլորտներում:

Ընտանեկան կյանքի մասին անեկդոտներում իրացվում են հասարակության մեջ ընտանեկան կյանքի վերաբերյալ ձևավորված կարծրատիպեր: Անգլիական անեկդոտներում իրենց վառ դրսևորումն են ստանում կանանց ամուսնանալու ձգտումը: Դա թերևս կապված է համընդհանուր տարածում գտած այն

կարծիքի հետ, որ կինը պարտադիր պետք է իրեն դրսևորի ընտանիքում: Կինը պատրաստ է նույնիսկ ամուսնության առաջարկ տեսնել այնտեղ, որտեղ դա անգամ չի էլ ենթադրվում:

Գոյություն ունի նաև կարծրատիպ այն մասին, որ կինը տան օջախի պահապանն է և պարտավոր է կատարել տնային ամբողջ աշխատանքը: Այս կարծրատիպի դրսևորումը հաճախ է հանդիպում անգլիական անեկդոտներում:

Օրինակ`

1) *As a boat is about to sink, a female passenger jumps up frantically and announces: "If I'm going to die, I want to die feeling like a woman."*

She removes all her clothing and asks: "Is there someone on this ship who is man enough to make me feel like a woman?"

A man stands up, removes his shirt and says: "Here, iron this!"

(Bigfun.com)

Անգլիական անեկդոտներում առկա է կերակուր պատրաստել չկարողացող կնոջ կարծրատիպը, և այստեղ շեշտը դրվում է կնոջ անպիտանիության վրա:

2) **Wife to her husband:** *Wake up. Some thieves have broken into our house. I think they are now eating the food I made last night.*

Husband: *Oh! Let's better call the ambulance then.*

(forjoke.com)

Գենդերային կարծրատիպերի ազդեցությունն անգլերենում հատկապես ակնառու է լեզվական մի քանի բառազույգերում: Օրինակ` չնայած այն բանին, որ *spinster* և *bachelor* բառերը նշանակում են **one who is not married**, նրանց մեջ դրված է բացարձակապես հակառակ իմաստ: Եթե *bachelor*-ը չեզոք եզրույթ է և նշանակում է ազատ տղամարդ, որը կարող է ընտրություն կատարել երկրպագուհիների բազմությունից, լեզվակիրները *spinster*-ը օգտագործում են որպես բացասական իմաստ ունեցող հասկացություն: Այն մատնանշում է կնոջ, որը ոչ ոքի պետք չէ, և որն արդեն չափազանց ծեր է իր անձնական կյանքը դասավորելու համար:

Որպես ընդհարման պատճառ` **ամուսնական անհավատարմության թեման** անգլիական անեկդոտներում հաճախ է արծարծվում:

Օրինակ`

3) *A man has six children and is very proud of his achievement. In fact, he is so proud of himself and his ability to impregnate that he starts referring to his wife as "Mother of Six" despite her constant objections.*

One night, they get a chance to leave the kids behind with a sitter and go to a party. The man decides that it's time to go home and wants to find out if his wife is ready to leave as well. He shouts at the top of his voice, "Shall we go home, Mother of Six?" His wife, irritated

by her husband's lack of discretion, shouts right back, "Anytime you're ready, Father of Four."

(jokesgallery.com)

Տղամարդը միշտ դավաճանում է դրսում, ոչ տանը: Դա կարելի է բացատրել նրանով, որ տղամարդը միշտ համարվել է ընտանիքը կերակրող որսորդ և այդ պատճառով երկար ժամանակ բացակայել է: Սակայն, անեկդոտների բովանդակային վերլուծությունից երևում է, որ կնոջ անհավատարմությունը երեք անգամ ավելի հաճախ է հանդիպում, քան ամուսնունը: Ենթադրվում է, որ նման իրավիճակներ անեկդոտներում ստեղծվում են այն պատճառով, որ դրանք հորինողները հենց տղամարդիկ են:

Կանացի հիմարության թեման բավականին հաճախ է արծարծվում անգլիական անեկդոտներում, առհասարակ խաղարկվում է կանանց գեղեցկության և հիմարության համարության գաղափարը:

4) **The first lady:** *My husband wired me from Paris on my birthday asking whether he should buy me a Rembrandt or a Titian. Now which would you have?*

The second lady: *Well, as far as that goes, any of those French cars are pretty good.*

(archive.org)

Ուշագրավն այն է, որ կենցաղային անեկդոտի միջոցով ներկայացվող կերպարները, որպես կանոն, ծրագրված տեսք ունեն` այս կամ այն թերությունն ընդգծող պիտակավորմամբ: Ժամանակի ընթացքում այդ պիտակները նպաստում են կայուն կարծրատիպերի մշակմանը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում **blonde** (*շիկահեր կին*) հավաքական կերպարը:

5) **A blonde** *stormed up to the front desk of the library and said, "I have a complaint!"*

"Yes, Ma'am?" said the librarian looking up at her.

"I borrowed a book last week and it was horrible!"

Puzzled by her complain the librarian asked "What was wrong with it?"

"It had way too many characters and there was no plot whatsoever!" said the blonde.

The librarian nodded and said, "Ahhh. So you must be the person who took our phone book."

(coolblondejokes.com)

Շիկահերը այն հերոսուհին է, որն աչքի է ընկնում չափազանց նեղ հետաքրքրությունների շրջանակով և մտավոր զարգացման ցածր մակարդակով` դրանով հանդերձ` գրավելով տղամարդկանց ուշադրությունը: Հարկ է նշել, որ շիկահերների մասին անեկդոտները բնութագրական են անգլալեզու հումորի համար: Անգլիական կենցաղային անեկդոտներում գոյություն ունի կարծրատիպ այն մասին, որ հիմարությունը տգեղ արտաքինից էլ վատ է:

Կարծրատիպային պատկերացումը, թե կնոջ մեջ ամենակարևորը **արտաքին տեսքն է**, առկա է ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց գիտակցության մեջ: Առաջին դեպքում կանայք իրենք են ձգտում բարելավել իրենց արտաքին տվյալները: Մյուս կողմից, տղամարդիկ գնահատում են արտաքուստ գրավիչ կանանց և ծաղրում տգեղադեմ արտաքինով կանանց:

Օրինակ՝

6) *The 50-year old wife comes up to her husband and says, 'So, Harvey. What do you think of my new braless look? Does it make me look younger?'*

"It does!" Harvey says. "It pulls all the wrinkles out of your face!"

(digitaldreamdoor.com)

Իզակականություն կոչվող երևույթը անգլիական աշխարհի լեզվական պատկերում ունի հեզնական նկարագիր: Անգլիական կենցաղային անեկդոտներում առանձնանում է կնոջ ձգտումը շրջապատին համոզելու, որ ինքը գեղեցիկ է ու երիտասարդ: Գեղեցիկ և երիտասարդ չլինելով՝ գրավիչ երևալու հավակնությունը ծիծաղ է առաջացնում տղամարդկանց մոտ:

Կնոջ շատախոսության կարծրատիպում մենք առանձնացրել ենք կանանց հետևյալ հատկությունը՝ խոսել շատ և անբովանդակ: Գոյություն ունեն անգլիական բազմաթիվ կենցաղային անեկդոտներ կանանց շաղակրատության, դատարկաբանության, բերանբացության ու կռվարարության մասին:

Օրինակ՝

7) *A husband read an article to his wife about how many words women use each day . . . 30,000 to a man's 15,000. The wife replied, "The reason has to be because we have to repeat everything to men." The husband then turned to his wife and asked, "What?"*

(everyday-wisdom.com)

Տղամարդիկ շատ խոսելու պահանջ չեն զգում, իսկ կանանց համար դա մեծագույն բավականություն է:

Առօրյա-կենցաղային խնդիրների շարքում գերակշռում է **հարբեցողության թեման**: Սակայն տվյալ արատի ներկայացումը հասարակության մեջ ոչ թե հանդուրժողական բնույթ է կրում, այլ դիտարկվում է որպես տղամարդկային հպարտության տարր և, յուրահատուկ տարբերանշան: Գինարբուքի իրավիճակը գոյություն ունի անգլիական մշակույթում և առանձնահատուկ կերպով արտացոլվում է անեկդոտներում:

8) *A man enters into a bar, and the waiter comes and asks him "What do you want to drink sir?" The customer points out to a guy laying on the floor and replies "Whatever that guy was drinking."*

(starman-soul-saver.blogspot.com)

Անգլիական կենցաղային անեկդոտներում գինարբուքի իրավիճակի առավել տիպական մասնակիցը ամուսնացած արական սեռի անձն է: Կինը անգլիա-

կան անեկդոտներում չի խմում, սակայն հանդես է գալիս որպես հակառակորդ, օրինակ՝ գործող անձի կնոջ (կամ զոքանչի) դերում: Անեկդոտների այս համաշարում կնոջ տարբերակիչ առանձնահատկությունը առողջ և սերունդը շարունակող լինելն է, որն էլ հարբեցողությունը, թմրամոլությունը և սեռական սանձարձակությունները բացառապես տղամարդու իրավասությունն է դարձնում:

Անգլիական անեկդոտներում **mother-in-law** (զոքանչ) կարծրատիպի դրսևորումը բնութագրվում է բարձր հաճախականությամբ և ունի ընդգծված բացասական գնահատողական երանգավորում:

Օրինակ՝

9) *A husband and wife walked up to view the body of his mother-in-law at the funeral.*

As he began to weep, his wife slapped him and said: "Why are you crying, you never liked my mother anyway!"

The husband replied "I know, I thought I saw her move!"

(jokesgallery.com)

10) *A pharmacist tells a customer: "In order to buy arsenic you should need a legal prescription. A picture of your mother-in-law just isn't enough".*

(jokeindex.com)

Անգլիական անեկդոտներում տղամարդիկ ավելի հաճախ հանդես են գալիս նաև որպես ագրեսիայի անմիջական նախաձեռնողներ: **Փեսայի** ու **զոքանչի** մասին անեկդոտներում իրացվում է այն ագրեսիան, որը առօրյա կյանքում ճնշվում է: Լայն տարածում գտած սյուժեներն են՝ զոքանչի մահվան ու նրա նկատմամբ բռնության, նրան վերացնելու (սպանելու կամ վտարելու միջոցով) գերակա թեմաները: Երբեմն զոքանչի չեզոքացման միջոցը ֆիզիկական մահվան փոխարեն դառնում է խոսքային *մահը*:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրելու, որ անգլիական կենցաղային անեկդոտի աշխարհի պատկերին հատուկ է տղամարդակենտրոնությունը՝ կողմնորոշվածությունը դեպի տղամարդը: Աշխարհի տղամարդակենտրոն պատկերը հիմնված է տղամարդու տեսակետի վրա և կառուցվում է տղամարդու հեռանկարի տեսանկյունից: Կինը դրանում ներկայացվում է որպես *այլ, օտար, կողմնակի* կամ առհասարակ անտեսվում է: Կնոջ *ձայնը* փաստացի չի լսվում:

Ապացուցման կարիք չունի այն փաստը, որ կարծրատիպերի աղբյուրները իրական հարաբերություններն են, որ կարծրատիպերի բովանդակությունը համագործակցային կամ մրցակցային, գերիշխողական կամ ենթարկվողական հարաբերությունների բնույթով, հուզարտահայտչական երանգավորմամբ և ճշմարտացիությամբ են պայմանավորված:

Անգլիական անեկդոտներում սեռերից մեկին ներկայացվում է վարքագծային նորմերի ու սպասելիքների առանձնահատուկ ամբողջություն, որը զգալիորեն տարբերվում է մյուս սեռին ներկայացվող պահանջներից: Այդ նպատակով

օգտագործվում են հատուկ եզրույթներ ու բառեր, որոնք տարակերպ են բնութագրում տղամարդկանց ու կանանց: Այդ ամենը արտացոլվում է հասարակական գիտակցության արտահայտման հատուկ ձևերում՝ կարծրատիպերում: Երգիծական խոսույթում կարծրատիպերը կատարում են մի շարք ճանաչողական գործառույթներ՝ սխեմայացման, պարզեցման, խմբի գաղափարախոսության ձևավորման, պահպանման և մտածական այլ գործառույթներ: Անգլիական անեկդոտներում կարծրատիպերի հիմնական գիծը հանրամշակութային պատճառաբանվածությունն է. աշխարհի մասին մարդու պատկերացումը ձևավորվում է հանրամշակութային շրջապատի ազդեցությամբ, որտեղ ինքն ապրում է:

Այսպիսով, կենցաղային անեկդոտը հանրույթի սոցիալական և բարոյաէթիկական արժեքների ձև է: Այն հենվում է տարբեր պատկերացումների ու կարծրատիպերի վրա, որոնք արտացոլում են լեզվամշակութային միջավայրի ներկայացուցիչների սուբյեկտիվ ու առանձնահատուկ ընկալումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Городникова, М.В. (2002) *Гендер в коммуникативной интеракции*. // Гендер: Язык. Культура. Коммуникация: Докл. Второй международной конф., Москва, 22-23 ноября 2001г.
2. Гуссейнова, И.А. (2002) *О некоторых формах представления гендерного аспекта в коммерческих дескриптивных рекламных текстах*. // Гендер как интрига познания: Альманах. Пилотный выпуск. Гендерные исследования в лингвистике, литературоведении и теории коммуникации. М.: Рудомино, сс. 57-66.
3. Караулов, Ю.Н. (1987) *Русский язык и языковая личность*. М.: Наука.
4. Кирилина, А.В. (2002) *Семантика личных имен: гендерный аспект*. // Аксиологическая лингвистика: проблемы изучения культурных концептов и этноспецифики. / Под ред. Н.А. Красавского. Волгоград, сс. 153-141.
5. Колшанский, Г.В. (1990) *Объективная картина мира в познании и в языке*. М.: Наука.
6. Телия, В.Н. (1999) *Первоочередные задачи и методологические проблемы исследования фразеологического состава языка в контексте культуры*. // Фразеология в контексте культуры. / Ред. В.Н. Телия. М.: Языки русской культуры, сс. 13-24.
7. Cameron, D. (2000) *Styling the Worker: Gender and the Commodification of Language In the Globalized Service Economy*. // Journal of Sociolinguistics. London, № 4/3. pp. 323-347.
8. Eckert, P.; McConnel-Ginet, S. (2003) *Language and Gender*. Cambridge: Cambridge University Press.
9. Gal, S.; Irving, J. (1995) *The Boundaries of Languages and Disciplines: How Ideologies Construct Difference* // Social Research. Baltimore, Maryland: The Johns Hopkins University Press, № 62, pp. 967-1001.

ԳՐԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. *Bigfun com*. Available at: <http://archive.org/stream/jstor25589379/25589379_djvu.txt> [Accessed August 2015].
2. *Blonde Jokes*. Available at: <<http://www.coolblondejokes.com/DumbJokes/BadBook.shtml>> [Accessed August 2015].
3. *Bigfun com*. Available at: <<http://digitaldreamdoor.com/pages/quotes/overfifty.html>> [Accessed August 2015].
4. *Some Funnies*. Available at: <<http://www.everyday-wisdom.com/guys-versus-gals.html>> [Accessed August 2015].
5. *Some Funnies*. Available at: <<http://www.forjoke.com/thieves-in-the-kitchen>> [Accessed August 2015].
6. *Bigfun com*. Available at: <<http://www.homeenglish.ru/Jokes287.htm>> [Accessed August 2015].
7. *Jokes Gallery*. Available at: <<http://www.jokesgallery.com/joke.php?joke=3456&id=1>> [Accessed August 2015].
8. *Jokes Gallery*. Available at: <<http://www.jokesgallery.com/joke.php?joke=4986&id=1>> [Accessed August 2015].
9. *Jokeindex*. Available at: <<http://www.jokeindex.com/joke.asp?Joke =1053>> [Accessed August 2015].
10. *Bigfun com*. Available at: <<http://starman-soul-saver.blogspot.com/2011/02/what-do-you-want-to-drink.html>> [Accessed August 2015].

The National World Picture in English Gender Stereotypes

The anecdote is regarded as one of the manifestations of mass gender stereotypes. The article traces the socio-cultural characteristics of English jokes, highlights the relationship of language, thought and culture, reveals the notion of cultural identity, examines the main characteristics of the anecdote as a text and analyzes ways to achieve comic effect and implementation of gender stereotypes on the example of specific texts.

Национальная картина мира в английских гендерных стереотипах

В статье прослеживаются социокультурные особенности английских анекдотов, освещается взаимосвязь языка, мышления и культуры, раскрывается понятие картина мира, исследуются основные характеристики анекдота как текста, анализируются способы достижения комического эффекта и реализации гендерных стереотипов на примере конкретных текстов. Анекдот рассматривается как одна из форм проявления массовых гендерных стереотипов. Выявлены также особенности основных стереотипов массового сознания и раскрыто их содержание.